ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ, 19 ՄԱՅԻՍԻ 2018Թ.
№ 13 (471)

... Եվ հետո ինչ էլ պատահի,
Հայերեն են գալու դարերդ:
Համո Սահյան

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

17 ժամ շարունակ դադարեցված էր Քաջարանի կոմբինատի աշխատանքը. սաբոտա՞ժ, նախազգուշացո՞ւմ, թե՞...

Մայիսի 10-ին, ինչպես հաղորդել ենք, ոտքի էին ելել Քաջարանի հանքագործները: Նրանք սկզբնապես պահանջում էին Վահե Հակոբյանի գլխավորած ավազակախմբի՝ 2014-ի օգոստոսից ի վեր իրականացրած գործունեության հետաքննություն, Միհեր Պոլոսկովի, Նարեկ Ամբարյանի, Զարուհի Տոնապետյանի, Վահե Հակոբյանի եւ մյուս գաղութարարների հեռացում Քաջարանից, կոմբինատի պրոֆիլակտորիայի վերահանձնում լեռնագործներին, ինչպես եւ աշխատավարձերի բարձրացում...

Հանքագործները հատկապես բացատրություն են պահանջել, թե ինչ սկզբունքով են ավազակախմբի անդամների մերձավորները (Երեւանից բերված) տասնապատիկ անգամ բարձր աշխատավարձ ստանում, քան տեղացիները:

Մարդիկ բացատրություն էին պահանջում, թե ինչու է Միհեր Պոլոսկովն ամսական 20 մլն դրամ աշխատավարձ ստանում, գրեթե նույնքան՝ ծպտված Նարեկ Ամբարյանը, մի քիչ էլ պակաս՝ Զարուհի Տոնապետյանը...

Հանքագործների բողոքի ակցիան նույն օրը ժամը 10-ին ընդհատվել էր՝ հաջորդ օրը՝ մայիսի 11-ին, հավաքվելու պայմանով:

Սակայն մայիսի 10-ի օրվա երկրորդ կեսին Քաջարանը կրկին ալեկոծվել է: Քաղաքում լուրեր տարածվեցին, թե կոմբինատի աշխատանքը դադարեցվում է...

էջ 3

Ավարայր եւ Սարդարապատ. պատմական զուգահեռներ

Հայոց պատմության երկու խորհրդանշական իրադարձությունները՝ Ավարայրն ու Սարդարապատը, մշտապես դրվում են կողք կողքի՝ իրարից անբաժան :

Երկու խորհրդանիշ, որոնք կապվում են մեր ժողովրդի լինել-չլինելու ահեղ հարցականի հետ: Պատմագիտական եւ հրապարակախոսական գրականության մեջ անսակարկելի ու անառարկելի տոնով արվում է սույն հարցադրումը: Ճշմարի՞տ է արդյոք այն: Ընդհանուր առմամբ, այո, սակայն որոշակի էական տարբերություններ, այնուամենայնիվ, կան Ավարայրի եւ Սարդարապատի միջեւ:

Ոչ միայն տարբեր էին հինգերորդ եւ քսաներորդ դարերի հայակական իրականությունները, այլեւ՝ թշնամի-հակառակորդը՝ հետապնդած նպատակներով, պատերազմելու մեթոդներով, հայ ժողովրդի հանդեպ որդեգրած վերջնական դիրքորոշումով ու վերաբերմունքով :

5-րդ դարում պարսիկները՝ ներխուժելով Հայաստան, ձգտում էին նվաճել այն, տարածել զրադաշտականություն, ապա՝ հայերին ձուլել պարսիկներին: Սակայն պետք է ընդգծել, որ պարսիկների, կոնկրետ՝ Սասանյան դինաստիայի եւ Հազկերտ Երկրորդի ծրագիրն անկարելի է համեմատել 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության պետական իշխանությունների՝ Սուլթան Աբդուլ Համիդի եւ այնուհետեւ երիտթուրքերի՝ հայ ժողովրդի ամբողջական ֆիզիկական բնաջնջման մտադրության ու գործողությունների հետ: Պարսիկները բնավ չէին ձգտում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանը: Ուրեմն, մեր ժողովրդին սպառնացող վտանգի աստիճանն ու ահագնությունը 5-րդ դարում այն չէին, ինչ 20-րդ դարասկզբին: Եվ եթե մերոնք Ավարայրում ծանր պարտություն կրեին ու ջախջախվեին, միեւնույն է, դրանով վերջակետ չէր դրվի մեր ժողովրդի լինելիությանը, քանի որ հայոց աշխարհը դեռեւս զգալիորեն շեն էր ու ամրակուռ, ուներ դիմադրությունը շարունակելու ու հարատեւելու պաշարներ ու հնարավորություններ: Ավարայրի անկումը դեռ չէր նշանակում հայոց երկրի ու պետականության անկում ու կործանում: Ավարայրի անկումից հետո պարսիկները դեռ պետք է նվաճեին հայոց մարտունակ երկիրը: Մինչեւ հինգերորդ դարը, մինչեւ Վարդանանց պատերազմը հայ ժողովրդին ու հայ ինքնությանը չէր հասցվել այնպիսի մահացու հարված, որն անդարմանելի ու անվերականգնելի լիներ մեր երկրի ու ժողովրդի համար:

Բոլորովին այլ՝ անմխիթար ու ողբերգական էր 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի հայկական իրականությունը:

Սարդարապատի նախօրյակին մեր երկիրը հոգեվարքի մեջ էր, քաղաքական, տնտեսական ու բարոյական առումներով թույլ, բզկտված, քայքայված ու պառակտված, սովահար որբերով ու գաղթականներով լեցուն: Եվ ամենակարեւորը՝ Սարդարապատի հերոսամարտից ընդամենը մի քանի տարի առաջ

էջ 5

Արդյո՞ք Վահե մարզպետի գործունեությունը քաջալերվում է Արցախից

Նամակ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին

Մեծարգո նախագահ

Խոսակցությունը, որ համարձակվում եմ վարել Ձեզ հետ հրապարակավ, հրամայական պահանջ է դարձել Սյունիքում, եւ հատկապես այս օրերին:

Բուն ասելիքս շարադրելուց առաջ հարկ եմ համարում շեշտել այն համակրանքն ու հիացմունքը, որ առկա են Սյունիքում Ձեր՝ ազգային ու պետական գործչիդ հանդեպ:

Ինքս էլ ուրախ եմ, որ անձամբ ծանոթ եմ Ձերդ գերազանցության հետ:

Մինչեւ հիմա տպավորված եմ 2016թ. հոկտեմբերի 29-ին Թալիշում Ձեզ հետ ունեցած հանդիպումով: Մենք մասնակցում էինք ապրիլյան իրադարձությունների ժամանակ նահատակված սյունեցիների հիշատակը հավերժացնող խաչքարի բացման արարողությանը: Հետո Դուք վրանային լսարանում ելույթ ունեցաք՝ հռչակելով սահմանագլուխ Թալիշի վերականգնման ծրագիր: Ես, որ բանի աշխարհի մարդ եմ ինձ համարում ու գիտեմ բառի, նախադասության արժեքն ու կարեւորությունը, ոգեշնչվել, ուժեղացել էի այդ խոսքից. նման զգացողություն նկատեցի մյուս ներկաների մոտ նույնպես:

Այդ օրվա վերջին պատահաբար Ձեզ տեսա Նոր Մարաղա գյուղում՝ բնակիչների հետ անկաշկանդ, առանց թիկնազորի, հավասարը հավասարի հետ սկզբունքով զրուցելիս. այդ մասին պատմել եմ իմ

էջ 4

Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը. ով ով է

ՀՀ վարչապետ՝Նիկոլ Փաշինյան

Առաջին փոխվարչապետ
Արարատ Միրզոյան

Փոխվարչապետ
Տիգրան Ավինյան

Փոխվարչապետ
Մհեր Գրիգորյան

Բնապահպանության նախարար
Էրիկ Գրիգորյան

Սփյուռքի նախարար
Մխիթար Հայրապետյան

Ֆինանսների նախարար
Ատոմ Ջանջուղազյան

Կրթության եւ գիտության նախարար
Արայիկ Հարությունյան

Էներգետիկ ենթակառուցվածքների
եւ բնական պաշարների նախարար
Արթուր Գրիգորյան

Գյուղատնտեսության նախարար
Արթուր Խաչատրյան

Տնտեսական զարգացման եւ
ներդրումների նախարար
Արծվիկ Մինասյան

Առողջապահության նախարար
Արսեն Թորոսյան

Արդարադատության նախարար
Արտակ Զեյնալյան

Պաշտպանության նախարար
Դավիթ Տոնոյան

Արտաքին գործերի նախարար
Զոհրաբ Մնացականյան

Սպորտի եւ երիտասարդության
հարցերի նախարար
Լեւոն Վահրադյան

Մշակույթի նախարար
Լիլիթ Մակունց

Արտակարգ իրավիճակների
նախարար
Հրաչյա Ռոստոմյան

Աշխատանքի եւ սոցիալական
հարցերի նախարար
Մանե Թանդիլյան

Տարածքային կառավարման եւ
զարգացման նախարար
Սուրեն Պապիկյան

Տրանսպորտի, կապի եւ ՏՏ
նախարար
Աշոտ Հակոբյան

17 ժամ շարունակ դադարեցված էր Քաջարանի կոմբինատի աշխատանքը. սաբոտա՞ժ, նախազգուշացո՞ւմ, թե՞...

էջ 1

Առաջին հայացքից խիստ տարօրինակ այդ տեղեկատվությունը, մինչդեռ, հավաստի էր: Ժամը 15-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը կանգ է առել...

Լեռնագործների պահանջով «Սյունյաց երկիրը» հրապարակավ դիմել է կոմբինատի գլխավոր սեփականատեր Ռոբերտ Քոչարյանին՝ պարզաբանելու, թե ի՞նչ է ի վերջո կատարվում կոմբինատում:

Սակայն որեւէ պատասխան չի ստացվել գլխավոր սեփականատիրոջից:

Մայիսի 11-ին՝ ժամը 10-ի սահմաններում, ինչպես պայմանավորվել էին մեկ օր առաջ, լեռնագործները կրկին հավաքվել են վարչական շենքի մերձակայքում:

Հանքագործներին ներկայացել է կոմբինատի տնօրեն Մհեր Պոլոսկովը, ով էլ խոստացել է առաջիկա շաբաթներին վերանայել աշխատավարձը, որից հետո ակցիայի մասնակիցները ցրվել են:

Ի դեպ, նույն օրն առավոտյան ժամը 8-ին, 17 ժամ տեւած դադարից հետո, կոմբինատը վերսկսել է աշխատանքը:

Այդ ամբողջ պատմության մեջ, մինչդեռ, ուշագրավ մի հանգամանք կա:

Հանքագործների բողոքի երկրորդ օրը՝ մայիսի 11-ին, ցուցարարները փոխել էին պահանջներն ու կարգախոսները: Չհնչեցին ավազակախմբի անդամներին առնչվող պահանջներ: Միայն աշխատավարձերի բարձրացում...

Քաջարանի մեր աղբյուրները հավաստիացնում են, որ մայիսի 10-ին՝ մեկօրյա դադար հայտարարելուց հետո, ակցիայի ակտիվ մասնակիցների հետ որոշակի «բացատրական աշխատանք» է տարվել արհկոմի նախագահ Դավիթ Գեւորգյանի կողմից: Վերջինս կարողացել է մարդկանց համոզել, որ հանքագործները մայիսի 11-ին բողոքի դուրս գան բացառապես աշխատավարձերի բարձրացման պահանջով: Նույնիսկ վարձակալվել են մարդիկ, ովքեր ցույցի ժամանակ գոհության խոսքեր պիտի հնչեցնեին Վահե Հակոբյանի ու Մհեր Պոլոսկովի հասցեին...

Մնում է սպասել, որ խոստացած ժամանակահատվածում Մհեր Պոլոսկովը կբարձրացնի լեռնագործների աշխատավարձը:

Մի հարց, այդուհանդերձ, առայժմ անպատասխան է մնացել: Ընդ որում՝ ոչ սովորական հարցի մասին է խոսքը:

Մայիսի 10-ին կոմբինատի աշխատանքները դադարեցվել են, որը տեւել է մոտ 17 ժամ:

Հավատացեք, որ դա (եթե ոչ աննախադեպ) բացառիկ իրողություն էր առնվազն անկախության տարիների կտրվածքով:

Ո՞ւմ կարգադրությամբ եւ ի՞նչ պատճառաբանությամբ է դադարեցվել հանքարդյունաբերական հսկայի գործունեությունը թեկուզեւ մի քանի ժամով:

Դա արտադրական-տեխնիկական անհրաժեշտությա՞մբ էր պայմանավորված, թե՞ սաբոտաժ էր, զգուշացում...

Հ.Գ.

Մայիսի 9-ին Ստեփանակերտից Սյունիք վերադարձած Վահե Հակոբյանը չի գնացել մարզպետարան, այլ պրոֆիլակտորիա՝ իր խրախճանքի վայր: Մայիսի 10-ին նույնպես նա մարզպետարան չի գնացել: Մինչեւ կեսօր եղել է Քաջարանի կոմբինատում, որից հետո հեռացել մարզից...

«Սյունյաց երկիր»

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկում է հետեւյալ թափուր աշխատատեղ՝

1. Տեխսպասարկման կետի ենթափոխի պետ (հանքի սպասարկման բաժին)
2. Ծանր տեխնիկայի մեխանիկ
3. Բացահանքի մեխանիկ
4. Թարգմանիչ
5. Հանքի ավագ մասնագետ
6. Նախագծող ինժեներ (հանքի տեխնիկական ծառայությունների բաժին)
7. Քիմիկ
8. էլեկտրիկ
9. Վերահսկիչ-չափիչ սարքերի մասնագետ
10. Կույտային տարրալվացման հրապարակի ինժեներ Ադսորբցիոն դեսորբցիոն վերականգնման / ջարդիչ կայան / եռակցման գծով մեխանիկ
11. Պլանավորող (վերամշակման գործարան)
12. Եռակցող / ջարդիչ կայան
13. Մետալուրգ
14. Ավտոմատ սարքավորումների տեխնիկական մասնագետ

LYDIAN ARMENIA

Գործատուն ապահովում է մասնագիտական դասընթացներ, կայուն աշխատանք՝ կայուն աշխատավարձով:
Աշխատանքի համար խնդրում ենք ուղարկել ձեր կենսագրությունը hr@lydianinternational.co.uk էլեկտրոնային հասցեին:
Հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝ +37443 404 802, 404 801
Հայտարարության վերջնաժամկետը՝ հուլիսի 1, 2018թ.

ԽԱՉԻԿ ԱՍՐՅԱՆԸ՝ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԵՎ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քրիստոնյա՛ եւ հայրենատե՛ր Հայեր

Իմ խորին համոզմամբ՝ 2018 թվականի ապրիլի 23-ից Հայաստանում սկիզբ առավ քաղաքական նոր ժամանակաշրջան, հետեւաբար, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ներքաղաքական ճգնաժամային իրադարձությունները, նորանկախ Հայաստանի Հանրապետության կազմավորման եւ ձեւավորման ընթացքում, իմ 26-ամյա հայրենանվեր գործունեության շրջանակներում կազմակերպած շուրջ 2000 հայրենասիրական եւ ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց Հայաստանում եւ Արցախում մասնակցել են 380-ից 400.000 քաղաքացիներ (http://www.hayocartsivner.am/), այդ թվում, վերջին 11 տարվա ընթացքում պետական համակարգում իմ ազնիվ, հավատարիմ եւ պատասխանատու գործունեությունը՝ տալիս եմ իմ հրաժարականը՝ Հայաստանի Հանրապետության սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարարի պաշտոնից եւ դուրս եմ գալիս Հայաստանի Հանրապետական կուսակցությունից: Ես շատ լավ գիտակցում եմ, որ այս նոր ժամանակաշրջանը ներկա եւ եկող սերունդների համար լինելու է մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստան կառուցելու հազարամյակը: Ուստի, քննության առնելով «Հայոց արծիվների» խորհրդի անդամների, բոլոր մասնաճյուղերի ղեկավարների վերլուծությունները, առաջարկները եւ 45.117 անդամների անկեղծ ցանկությունը, որոշում ընդունվեց. 15-ամյա գործունեության արդյունքում Հայաստանում 301 մասնաճյուղ հիմնադրած «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության ամուր հիմքի վրա ստեղծել նոր՝ «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունը, որն ուղղակի հավատարիմ է մնալու «Հայոց արծիվների» որդեգրած ազգային-պետական-հայրենասիրական գաղափարախոսությանը եւ շարունակելու է «Հայոց արծիվների» ազգային-պետական-հայրենասիրական գործունեությունը՝ կրկին ջանք ու եռանդ չխնայելով Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփյուռ հայերի միասնության ամրապնդման եւ հայոց պետականության, հայոց սուրբ հողի ու հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործում:

Գիտակցական իմ կյանքում, 26 տարիների գործունեություն, բացառապես ուղղված է եղել իմ պետության եւ իմ ժողովրդի արտաքին անվտանգության ապահովմանը, ասել է թե՝ հայոց բանակ, հայ զինվոր, զորամասեր, սահմանագիծ, մարտական հենակետեր եւ արտաքին պաշտպանություն. հետայսու իմ եւ նորաստեղծ կուսակցության առանցքային առաքելությունն եմ համարում իրականացնել նույնքան շռնդալից ու չերկրորդվող գործունեություն Հայաստանի՝ այժմ նաեւ՝ ներքին կայունության համար: Այո՛, «Հայոց արծիվները», իր վաստակած հեղինակությամբ, մեծ փորձով եւ վճռականությամբ, մնալով հայոց սուրբ հողի պաշտպանության խրամատներում, միաժամանակ, մտնում է Հայաստանի ներքին քաղաքականության պայքարի մեջ՝ հաղթելու եւ, իրոք, կառուցելու մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստան:

«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության առաքելությունը հայ ազգի եւ հայոց պետականության ներքին եւ արտաքին անվտանգության ապահովումն է:

Մարդկության պատմության ողջ ընթացքում, մասնավորապես քաղաքականության մեջ, հասարակական կազմակերպության կամ կուսակցության առաջնորդի որդեգրած գաղափարախոսությունը երբեք չի փոխվել եւ չի կարող փոխվել, իսկ կարգախոսները փոխվել են պարտադիր՝ համաձայն ժամանակաշրջանի պահանջների:

Այնպես, ինչպես «Սյունյաց արծիվներ» երիտասարդական հասարակական կազմակերպությունն իր գործունեության յոթ տարիների ընթացքում որդեգրել էր «Իմ միջոցով՝ ազգիս համար», «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունն ութ տարվա ընթացքում՝ «Հայոց պետականություն, Ազգային բանակ, Հայոց Առաջնորդ» կարգախոսները, «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունն էլ որդեգրել է «Աստվա՛ծ, Հա՛յ Ազգ, Հայաստա՛ն» կարգախոսը:

«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունն իր մասնակցությունն է ունենալու առաջիկայում տեղի ունենալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին:

Իսկ ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն է որդեգրելու «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունը: Նախ՝ կրկին հիշեցնեմ, որ իմ 26-ամյա հայրենանվեր գործունեությունը, ինչպես եղել է, կա եւ լինելու է բացառապես հայածին ու հայակենտրոն, այնպես էլ նոր կուսակցության գործունեությունը, բնականաբար, կլինի հայածին եւ հայակենտրոն: Միեւնույն ժամանակ, անբեկանելի է, որ 21-րդ դարում, երկիր մոլորակում չկա որեւէ պետության մեջ գործող մի կուսակցություն, որն իր ժողովրդի եւ իր պետության անվտանգության եւ վերջինիս հզորացման համար չունենա դաշնակից-բարեկամ պետություն, որն էլ ենթադրում է արտաքին քաղաքականության կողմնորոշվածություն:

Այո՛, «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունն, իր ստեղծման պահից, շատ լավ գիտակցում է եւ համոզված է, որ, բացառապես Ռուսաստանի Դաշնության՝ ի դեմս քրիստոնյա ռուս ժողովրդի, ձեռք ձեռքի բռնած, պետք է առաջ շարժվենք եւ հզորացնենք Հայաստանն ու Ռուսաստանը՝ որպես հավատարիմ, անդավաճան քրիստոնյա եղբայրների եւ դաշնակից-բարեկամ պետությունների: Հայերիս ի վերուստ տրված հայկական բարձրավանդակում խաղաղություն ապահովելը, բացառապես, կախված է Հայաստանի եւ Ռուսաստանի ազնիվ, անփոխարինելի բարեկամությունից:

Կո՛չ եմ անում Արցախյան հերոսամարտ հաղթանակած ողջ հայ ժողովրդին. չտրվե՛լ արեւմտյան այլասերված բարքերին եւ չգայթակղվե՛լ, այլ հայ ընտանիքում միշտ անսասան պահել նախնիներ-ծնող-զավակ անքակտելի կապը:

«Պրոյե՞կտ է» արդյոք «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունը: Զավակն իր ծնողի համար երբեք չի կարող «պրոյեկտ» լինել: Այսինքն՝ 15 տարի առաջ հայ ընտանիքում ծնված «Հայոց արծիվները» ոչ միայն ինձ, այլեւ համայն հայության համար չի կարող պրոյեկտ լինել ճիշտ այնպես, ինչպես հայ ազգի հզոր ապագայի կերտումը չի կարող «պրոյեկտ» լինել հայ ժողովրդի համար: Սա նշանակում է, որ, իրոք, հա՛յ ժողովուրդն է «Հայոց արծիվները»:

«Աստվա՛ծ, Հա՛յ Ազգ, Հայաստա՛ն»:

Հաջորդ հարցերի պատասխանները կինչեն «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության առաջիկայում կայանալիք հիմնադիր համագումարում:

Անսասան հավատքով եւ խորին հարգանքով՝

Խաչիկ Ասրյան

Արդյո՞ք Վահե Մարզպետի գործունեությունը քաջալերվում է Արցախից

Նամակ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին

էջ 1

բանավոր եւ գրավոր զրույցներում:

Այս տարվա մարտի 1-ին էլ, հանգամանքների բերումով, Կարմիր շուկա գյուղում էի: Տեսա, թե Ստեփանակերտ-Հադրութ՝ երբեմնի դժվարանցանելի մայրուղին ինչպես է դարձել ժամանակակից ավտոխճուղի, ինչը հավելյալ վկայություն է Արցախում իշխող ստեղծագործ մթնոլորտի:

Մինչ այդ էլ՝ քանիցս ու պարբերաբար, մեր թերթի ստեղծագործական խումբը, Արցախի Հանրապետության պաշտպանական գերատեսչության թույլտվությամբ, եղել է արցախաադրբեջանական շփման գծում եւ ականատես դարձել հիմնարար այն փոփոխություններին, որ հատկապես վերջին շրջանում կատարվել ու կատարվում է առաջնագծում:

Այդ ամենի պրիզմայով, Ձեր կերպարի ու Ձեր երկրաշեն արարմունքների միջոցով տեսնում ենք Արցախի հպարտ հանրապետությունը, որ յուրաքանչյուր հայի համար սրբասուրբ երկրամաս է, հայոց արժանապատվության խորհրդանիշ:

Ձեմ թաքցնում՝ նորօրյա Արցախի մասին մեր ընկալումների ձեւավորման վրա անզուգական ազդեցություն ունի նաեւ Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Վերջին տարիներին՝ անձնական եւ անանձնական կյանքի դժվարին պահերին, երբ հարկ է եղել անկեղծանալ Աստծո սպասավորներից մեկի հետ՝ Պարգեւ արքեպիսկոպոսի դուռն ենք բախել, եւ հավատի առավել հաստատուն պաշարով, առավել լավատեսությամբ բաժանվել նրանից:

Ահա այդպես ենք ընկալել եւ ընկալում Հայոց Արցախը:

Գումարած պատմական իրողությունը, որ Սյունիքն ու Արցախը մեկ ամբողջություն են եղել դարեր շարունակ (եւ ոչ միայն աշխարհագրորեն), միմյանց նեցուկ կանգնել, առաջինն իրար օգնության ձեռք մեկնել, երբ դրա կարիքն է առաջացել...

Եվ այդ ամենի համապատկերի վրա մերօրյա Սյունիքում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք ցավ են պատճառում արժանապատիվ ամեն մի սյունեցու, որոնք Սյունիք-Արցախ մաքրամաքուր առնչություններում տարակույսների ճաքեր են առաջացնում:

2014թ. օգոստոսից Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության հսկայի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կառավարումը հանձնվեց Վահե Հակոբյանի գլխավորած մի խմբի, որն ամիսներ անց եւ հիմա արժանացավ ավազակախումբ հորջորջումին:

2016թ. հոկտեմբերին այդ խմբին հանձնվեց նաեւ Սյունիքի մարզի կառավարումը:

Այն, ինչ որ դրանից հետո կատարեց Վահե Հակոբյանը Սյունիքում, համեմատելի է միայն սելջուկների, օսմանցիների կողմից մեր երկրամասում կատարածների հետ:

Նրա չարագործությունների մասին տասնյակ դիմումներ ուղղվեցին Հայաստանի Հանրապետության վարիչներին, մոտ հարյուր թերթային հրապարակում եղավ, բայց դրանցից եւ ոչ մեկը Երեւանում քննարկման առարկա չդարձավ:

Ու այդ ընթացքում միշտ էլ, որքան էլ ցավալի ու տարօրինակ է, Սյունիքում շրջանառվել է խոսակցությունը, թե իբր Վահե Հակոբյանը հովանավորվում ու քաջալերվում է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանավորների կողմից:

Դա, կրկնում ենք, ցավով ենք ընդունել, նաեւ զարմանքով, բայց (անկեղծ լինեմ) միշտ չէ, որ հավատի է թվացել: Ավելի ճիշտ՝ ինքներս փորձել ենք համոզել մեզ, որ նման բան լինել չի կարող:

Վերջին օրերին, սակայն, հայտնի իրադարձություններին համահունչ, ոչ միայն թեժացել են այդ խոսակցությունները, այլեւ նոր դրսեւորումներ ունեցել:

Նախ՝ հազարավոր սյունեցիներ ապշած են, որ ս.թ. մայիսի 8-9-ի արցախյան տոնախմբություններին մասնակցելու համար պաշտոնական Ստեփանակերտն Արցախի Հանրապետություն է հրավիրել Վահե Հակոբյանին եւ Մեր Պոլոսկովին, ովքեր վաղուց սովորական հրոսակի համբավ ունեն մեզանում, ովքեր տրորել եւ շարունակում են տրորել Սյունիքի արժանապատվությունը:

Շուշիի եւ առհասարակ Արցախի ազատագրումը խորհրդանշող այդ տոնին Վահե Հակոբյանին մասնակից դարձնելն անընդունելի է նաեւ այն պատճառով, որ մեր երկրամասում գտնվելու մոտ չորս տարվա ընթացքում քանիցս նա անամոթաբար ծաղրել է Արցախյան ազատամարտի սյունեցի մասնակիցներին, կասկածի տակ առել Արցախյան հերոսամարտում

Ավարայր եւ Սարդարապատ. պատմական զուգահեռներ

էջ 1 Հայոց ցեղասպանությունն էր եղել:1915-1918 թվականներին տեղի ունեցած դեպքերը բնավ էլ պատահական, պատերազմական թոհուբոհի հետեւանք չէին, այլ թուրքական պետականության վաղեմի երազած ու մանրամասն մշակած հայաջինջ ու հայասպան քաղաքականության հաշվենկատ իրագործումն էին:

Նշենք, որ 1918թ. գարնանը թուրքերը շատ մոտ էին իրենց փայփայած ծրագրերի իրագործմանը: Եվ եթե Սարդարապատն ընկներ, թուրքերը գրավելու էին էջմիածինն ու Երեւանը, որով փակվելու էր հայ ժողովրդի արյունոտ Գողգոթայի վերջին արարը: Անկասկած է, որ Սարդարապատի անկումից հետո թուրքական յաթաղանից հայության անպաշտպան բեկորներին փրկություն չէր լինելու:

Ցեղասպան թուրքը՝ դարեր շարունակ կեղեքելով ու հալածելով հայությանը, 20-րդ դարասկզբին ձգտում էր լուծել Հայկական հարցը՝ Հայաստան երկրում հայ չթողնելով: Արեւմտյան Հայաստանում արդեն մեծ մասամբ իրագործել էին իրենց ծրագիրը, մնում էր վերջ տալ գաղթականների բեկորների եւ փոքրիկ արեւելահայության գոյությանը նաեւ Արեւելյան Հայաստանում:

Ի դեպ, թուրքերի՝ տվյալ ժամանակի քաղաքական ու ռազմական առաջնորդները գրեթե ոչ մի կասկած չունեին, որ իրենք հաջողությամբ սրի կքաշեն նաեւ արեւելահայությանը: Հայ ժողովրդի անեւլանելի, հուսահատական վիճակը Սարդարապատի նախօրյակին, թերեւս, առավել պատկերավոր ու դիպուկ արտահայտել է ժամանակակիցը՝ հայ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը. **«Հայության վիճակն ամենահուսահատականն է. վտանգված է հայի գոյությունը. Կարսը եւ Բաթումը գրավելուց հետո ամբողջ Կովկասը թուրքերի ոտքի տակն է. կջարդեն հայերին եւ մասամբ էլ վրացիներին, կհասնեն Բաքու եւ Թավրիզ» (Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, 330-331): Ապա մեծ մտածողն ընդհանրացնում է. «Հայությունն ապրում է իր 3 հազար տարվա պատմության ընթացքում չտեսնված մի ծգնաժամ: Թուրքահայաստանը՝ կոտորված, ավեր ու ամայի, իսկ Ռուսաստանը՝ նույն օրհասի առջեւ սրտադող կանգնած, աշխարհից, մարդկանցից ու աստծուց լքված» (նույն տեղում, 331-332):**

Սարդարապատի հուշահամալիրի մուտք

Այսպիսի քաղաքական, պատմահոգեբանական պայմաններում կայացավ Սարդարապատի հերոսամարտը: Կատարվեց իրական հրաշքը, քանզի առավել անհրաժեշտ ու հեքիաթային էր թվում հաղթանակը 1918թ. մայիսին Սարդարապատի մոտ, քան հաղթությունը 451թ. մայիսի 26-ին՝ Ավարայրի դաշտում: Հայ ժողովուրդը կարողացավ իր բոլոր խավերով ու հատվածներով, մեծով ու փոքրով հավաքել եւ գոյապայքարի նետել իր կենսունակության վերջին ռեսուրսները: Իր բազմադարյան պատմության ամենաօրհասական պահին հայ ժողովուրդը համախմբումի ու բռունցքվելու, քաջության ու հերոսության եզակի կամք դրսեւորեց, որի արդյունքում Սարդարապատում ջարդվեց թուրքական բանակի ողնաշարը: Այս ամենից հետո, այնուամենայնիվ, ուզում ենք արձանագրել, որ էական, բախտորոշ ընդհանրություններ կան Ավարայրի եւ Սարդարապատի միջեւ: Երկու իրադարձությանն էլ բնորոշ է հետեւյալը. Ավարայրն ու Սարդարապատը համաժողովրդական պատերազմի ուժգնություն, բնույթ ու հնչեղություն ունեին՝ չնայած այն հանգամանքին, որ թե՛ Ավարայրում, թե՛ Սարդարապատում թշնամու դեմ կռվողների հիմնական միջուկը կանոնավոր բանակն էր: Հայոց պատմության ողջ ընթացքում միայն երկու անգամ է մեր հայրենիքում մղվել նման ծավալի պատերազմ: Զգալիորեն համընկնում է տարվա եղանակը, ամիսը, օրը: Վտանգի, տագնապի եւ ցասման վիթխարիությունը բնորոշ էր ե՛ւ Ավարայր, ե՛ւ Սարդարապատ կերտողներին: Անկարելի է չնկատել զարմանալի հոգեհարազատություն երկու ճակատամարտը հրամանատարած հայ զորավարների ոգեշունչ վարքի ու բարոյական բարձր նկարագրի մեջ: Որքան հանդուգն, խիզախ ու քաջակորով էին 5-րդ դարի հայ զորավարները՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, նույնքան արիասիրտ ու ոգեշունչ էին Սարդարապատում հայ զինյալ ուժերն առաջնորդած զորականները՝ Մովսես Սիլիկյանի եւ Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ: Ավարայրի դաշտում «Մատյանի գնդի» դեմ գրոհողները Սարդարապատի «Մահապարտների» գնդի խիզախներն էին, ովքեր առաջնորդվում էին «Մահ իմացյալ՝ անմահություն» պատգամով: Եվ, վերջապես, միեւնույն հերոսական, ոգեշունչ պահվածքը դրսեւորեցին հայ հոգեւոր դասի ներկայացուցիչները: Ավարայրի դաշտում զորքին եւ աշխարհազորայիններին ոգեշունչ խոսքով քաջալերող Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսի, Ղեւոնդ Երեցի արժանավոր հետնորդները հանդիսացան Գեւորգ 5-րդ կաթողիկոսը, Եզնիկ եւ Թադեւոս եպիսկոպոսները, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը, Էրզրումի առաջնորդ Զավեն Բաբայանը: Հենց վերոնշյալների կամքի ու ջանքի շնորհիվ հայ զինվորն ու գյուղացին համոզվեցին, որ այլեւս նահանջելու տեղ չկա:

Եվ ճշմարիտ է հայ պատմաբանի այն դիտարկումը, որ **«Ազգի բոլոր ազնիվ զավակները նման դեպքում միայն մեկ նշանաբան են ունենում հաղթել կամ պատվով մեռնել: Այն, ինչ տանելի էր Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի, անգամ Կարսի մոտ, այլեւս անտանելի էր Երեւանի մատույցներում, էջմիածնի պատերի տակ»** (Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984,187): Ավելացնենք, որ Ավարայր-Սարդարապատ պատմական զուգահեռ տանելիս պետք է անվարան շեշտադրել՝ եթե 5-րդ դարում կարելի էր նահանջել Ավարայրից, ապա նույն բանն անկարելի էր անել Սարդարապատում: Դա կլիներ ոչ թե դավաճանություն հայրենիքի նկատմամբ, այլ պարզապես ինքնաոչնչացում:

Ավարայրի ու Սարդարապատի մարտիկներին ոգեշնչման ու խիզախման էր տանում հայոց պատմության հերոսական ոգին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սյունեցիների արժանապատիվ մասնակցությունը, որ մյուռոնված է 500 ազատամարտիկ-նահատակի արյամբ:

Ուզում եմ Ձեզ տեղյակ պահել, որ 2018թ. ապրիլ-մայիսին Հայաստանում թեւածած քաղաքացիական ազնիվ շարժումը Սյունիքում յուրահատուկ դրսեւորումներ ունեցավ:

Գրեթե բոլոր ցույցերում ու հանրահավաքներում (Մեղրիում, Կապանում, Գորիսում, Սիսիանում, նույնիսկ Քաջարանում) հնչում էին կոչեր՝ պահանջելով մարզպետի անհապաղ հեռացումը Սյունիքից:

Եվ այդ ամենից հետո, Վահե Հակոբյանի ստեփանակերտյան վերոնշյալ այցից հետո, Սյունիքի մարզպետարանը (ոչ առանց մարզպետի գիտության) ամենատարբեր խողովակներով լուրեր է շաղ տալիս, թե իբր Արցախի Հանրապետության ղեկավարությունը թույլ չի տա Վահեի հրաժարականը, իսկ հակառակ պարագայում կաջակցի նրան՝ զբաղեցնելու Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի պաշտոնը:

Հանրային մերժումի եւ ատելության արժանացած Վահե Հակոբյանն այս օրերին նաեւ աներեւակայելի քայլերի է դիմում՝ դարձյալ շահարկելով Արցախի իշխանությունների անունը:

Ազգային զարթոնքի այս օրերին ակտիվ պայքարի էին ելել Քաջարանի կոմբինատի բեռնատարների տեղացի վարորդները: Նրանք մեղադրում էին եւ են մարզպետին այն հարցում, որ իր սեփական 36 բեռնատարով (յուրաքանչյուրը՝ 30 տոննա բեռնատարողությամբ) փոխադրում են Քաջարանի կոմբինատի խտանյութի մեծագույն մասը՝ տեղացի վարորդներին մատնելով անգործության:

Որքան էլ զարմանալի է, մարզպետը, ինքնապաշտպանվելու համար, վարորդներին ասել եւ ասում է (այդ մասին մեզ պատմեցին խմբագրություն այցելած վարորդները), որ բեռնատարները միայն իրենը չեն, այլ նաեւ Ղարաբաղի ղեկավարներինը, Վլադիմիր Գասպարյան այլեւս նախկին ոստիկանապետինը եւ մեկ այլ անձնավորության, ով ընդգրկված է Հայաստանի նոր ղեկավարության կազմի մեջ:

Գարնանը նա Սյունիքի գյուղացիներից գումար էր հավաքել՝ ազոտական պարարտանյութ ձեռք բերելու համար: Եվ ժամանակին այդ միջոցներով ձեռք է բերվել 1400 տոննա պարարտանյութ, բայց չի բաժանվել գյուղացիներին, նաեւ հավաքած գումարը չի վերադարձվել, քանի դեռ մեր թերթը չէր ահազանգել: Եվ մարզպետարանը կրկին (ոչ առանց մարզպետի գիտության) շահարկեց Ղարաբաղի անունը՝ իբր հազար տոննա պարարտանյութն ուղարկվել է այդտեղ՝ երկրագործությամբ զբաղվող հայտնի բարձրաստիճանին:

Երբ Կապանի «Վայբլը» խլում էին օրինական տիրոջից (կիր արտադրող ձեռնարկություն է) եւ հանձնում հայտնի կուսակցության «հայրենասեր» գործիչներին, Վահե Հակոբյանը վերստին շահարկեց Ղարաբաղի անունը, իբր այդտեղից են պահանջել սեփականատիրոջ փոփոխություն, այլապես թույլ չեն տա հումքը ներկրել Արցախի տարածքից:

Երբ նրան հարցնում էին, թե ինչպես ես Քաջարանի լեռնագործների հաշվին ազատագրված տարածքներում սեփական ձեռնարկություն հիմնել, վերստին շահարկում էր Արցախի իշխանավորների անունը, թե՝ իմը չէ, նրանցն է...

Նորից հավաստում ենք՝ Սյունիքում հատուկենտ են մարդիկ, ովքեր լուրջ են վերաբերվում մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորության նմանատիպ շառլատանությանը: Այդ ամենը մեր կողմերում ավելի շատ գնահատվում է իբրեւ հոգեվարք ապրող մարդու, հոգեկան հավասարակշռությունը կորցրած չինովնիկի սովորական տվայտանք:

Եվ քիչ տրամաբանական ենք համարում, որ Արցախի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց թույլ կտան այդկերպ միջամտել Հայաստանի Հանրապետության որեւէ մարզի գործերին:

Մյուս կողմից, սակայն, մեզ զարմացնում է հանդուրժումի հեքիաթային իրողությունը, որ առկա է հայաստանյան բարձրաստիճան այդ պաշտոնյայի արգահատելի արարքների հանդեպ: Ի վերջո գործ ունենք Արցախի Հանրապետության փառավոր անունը տեղի-անտեղի շահարկելու հանգամանքի հետ, որը, կրկնում եմ, նաեւ տարակույսների տեղիք է տալիս:

Շատերի կարծիքն եմ հայտնում՝ Վահե Հակոբյանի չարագործությունների, կամայականությունների, օրինազանցությունների եւ Արցախի Հանրապետության որոշ պաշտոնյաների միջեւ առկա առնչությունների ջրբաժանը հստակեցնելու պետք ունի:

Եվ դա անհրաժեշտ է անել հրապարակավ, քանզի առնվազն սյունիքյան լսարանում այդ հարցը մտահոգում է մարդկանց, որովհետեւ դա ուղղակիորեն առնչվում է մեր երկրամասի զարգացմանը:

Վերջում՝ Ձեր ըմբռնումն ենք ակնկալում եւ ներողամտություն հայցում՝ Ձեր ուշադրությունը նման մանրուքների վրա հրավիրելու, Ձեր ծանրաբեռ ու բազմազբաղ առօրյայից ժամանակ խլելու համար, թեեւ բարձրացված հարցերն ամենեւին էլ մանրուք չեն Սյունիքում ապրողներիս համար, թեեւ լռությունն ու անտարբերությունը չեն ստեղծված իրավիճակից դուրս գալու այլընտրանքը: Մանավանդ որ հայոց մեջ շարունակում է իշխել տեսակետը, որ պատմության բոլոր հանգրվաններում Սյունիքը (նաեւ մեր բազում մեծերի գնահատմամբ) եղել ու մնում է հայոց պետականության եւ ինքնիշխանության վեմ քարը:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր
14 մայիսի 2018թ.

Հարժիսը եւ Շինուհայրը համայնքապետ Մուրադ Սիմոնյանին մեղադրում են անբանության եւ ձրիակերության մեջ՝ պահանջելով նրա հրաժարականը

Հանրապետությունում ահագնացած քաղաքացիական ակտիվության փոթորիկը Սյունիքում ջրի երես է հանել լրջագույն մի խնդիր եւս, որ խոչընդոտում է ոչ միայն մեր երկրամասի, այլեւ հանրապետության բոլոր համայնքների զարգացմանը:

Խոսքը բռնի ուժով համայնքները միավորելու կամ խոշորացնելու մասին է, որից ամեն համայնքում գոհ է ընդամենը մի մարդ՝ համայնքի ղեկավարը:

Իրականում, ինչպես արդեն տեսնում ենք, համայնքների խոշորացումը լեռնային ու սահմանամերձ գյուղերը հնարավորինս արագ եւ անաղմուկ վերացնելու ստույգ նպատակ են հետապնդում:

Միայն Տաթեւ համայնքում վերջին երկու տարում տեղի ունեցող զարգացումները բավական են, որ համոզվենք վերը նշվածի ճշմարտացիության մեջ:

Մուրադի օրերում՝ երկու տարում, հասցրել ենք վերացնել Քաշունի (նախկինում՝ Մալդաշ) գյուղը: Ութ գյուղից մնաց յոթը…

Տաթեւ համայնքի ստեղծումից հետո, ըստ տարբեր գյուղերի բնակիչների վկայության, ենթաշրջանի վիճակը կտրուկ վատացել է բոլոր առումներով:

«Ռեֆորմի» անհեթեթությունը հիմնական պատճառ համարելով, Հարժիս եւ Շինուհայր գյուղերի բնակիչները համայնքում ստեղված վիճակը բացատրում են նաեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանի ձրիակերությամբ եւ անբանությամբ:

Վահե Հակոբյանի ցեխոտ ոտքերի տակ պառկելու սյունիքյան մրցույթում Մուրադն առաջին տեղերից մեկն է գրավել, ինչը, սակայն, շատ թանկ է նստում գյուղերի վրա:

«Սյունյաց երկրին» դիմած շինուհայրցիները եւ հարժիսցիները պնդում են, որ համայնքի ղեկավարը գոյատեւում է՝ որեւէ կապ չունենալով համայնքի մեջ մտնող գյուղերի հետ:

Գյուղացիները պահանջում են, որ Մուրադը հրաժարականից առաջ հաշվետվություն տա բնակչությանը, թե խոշորացումից հետո ֆինանսական ի՞նչ միջոցներ է հատկացվել համայնքին եւ ի՞նչ նպատակով են օգտագործվել այդ միջոցները, ի՞նչ պատկեր ունի համայնքային բյուջեն, ովքե՞ր եւ ինչի՞ համար են համայնքապետարանից աշխատավարձ ստանում:

Գյուղացիները պնդում են, որ Մուրադը ռադ լինելուց առաջ հրապարակի իր կողմից ստորագրված բոլոր

պայմանագրերը՝ համայնքի ունեցվածքին առնչվող:

Գյուղացիները պահանջում են համայնքի ավագանուց, օրենքով սահմանված կարգով, չեղյալ համարել Մուրադի պաշտոնավարման ընթացքում համայնքում «անցկացված» բոլոր մրցույթների արդյունքները, որոնք առնչվում են համայնքի ունեցվածքին: Որեւէ մրցույթ չի կարող օրինական համարվել, քանի որ դրանց ելքը նախապես կանխորոշվել է մարզի ավագակապետ Վահե Հակոբյանի գրասենյակում եւ իջեցվել իր գործիքներին՝ Մուրադին եւ Մարատին, ովքեր էլ հաճույքով ի կատար են ածել մարզպետի քմահաճույքները:

***

Մայիսի 2-ին՝ ժամը 11-ի սահմաններում, Հարժիս գյուղի երիտասարդները եւ դպրոցականները փակել են Մեղրի-Երեւան ավտոմայրուղին: Դա այն տարածքն է, որի մերձակայքում մի քանի անգամ ուղղաթիռով գաղտնի վայրէջք է կատարել Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը: Նույն վայրից նա քանիցս թռչել է Երեւան՝ Կապանում եւ Գորիսում ստեղծելով տպավորություն, թե իբր մեքենայով է ճանապարհվում Երեւան:

Հարժիսցիները պահանջում են մարզպետի, ինչպես եւ նրա թաշկինակներից մեկի՝ Տաթեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանի անհապաղ հրաժարականը:

«Սյունյաց երկիր»

Ինչ հիմքով է կարճվել Տաթեւ համայնքի ղեկավարին առնչվող քրեական գործը

Տաթեւ համայնքի գյուղերում այս օրերին թեժանում է լարվածությունը համայնքի ձեռնածու ղեկավար Մուրադ Սիմոնյանի գործունեության շուրջ:

Բնակիչներին մտահոգող հարցերից մեկն էլ այն է, թե ինչպե՞ս է կարճվել Մուրադ Սիմոնյանին առնչվող քրեական գործը: Գուցե եւ դա չհետաքրքրեր մարդկանց, եթե Վահե մարզպետը քանիցս մարզպետարանում չհայտարարեր, թե ինքն է կարճել տվյալ քրգործը:

Այդ պատմությանը «Սյունյաց երկիրն» անդրադարձել է դեռեւս 2018թ. մարտի 7-ին:

Թերթի հրապարակման մեջ մասնավորապես նշվել է՝ «Տաթեւ համայնքում, մարզպետ Վահե Հակոբյանի հանձնարարությամբ եւ համայնքապետի ու նրա դիմակավորված օգնականի ջանքերով, կեղծվել է պետֆոնդի վարելահողերը վարձակալությամբ տալու համար 2017-ին անցկացված մրցույթը: Դա խոստովանում է ինքը՝ համայնքապետ Մուրադ Սիմոնյանը:

Համայնքի ղեկավարի առջեւ մրցույթից առաջ խնդիր էր դրվել մի քանի անցանկալի անձանց զրկել հողեր մշակելու հնարավորությունից, ինչը եւ կյանքի կոչվեց: Ընդ որում՝ հողերի մշակման հնարավորությունից զրկվեցին այն ֆերմերները, ովքեր 3-4 անգամ ավելի գումար էին առաջարկում մեկ հեկտարի վարձակալության համար, քան Մուրադի բարեկամներն ու մերձավորները

Եվ միայն այդ «մրցույթի» արդյունքում համայնքային բյուջեն զրկվեց տարեկան մոտ 5 մլն դրամ գումարից»:

«Սյունյաց երկրի» այդ հրապարակման մեջ նշվում է նաեւ՝ **«Տաթեւ համայնքի ղեկավարը, Տաթեւի գյուղապետ աշխատելու վերջին շրջանում, ակնհայտ սխալներով է անցկացրել համայնքային ինչ-որ գույքի աճուրդ կամ վարձակալության մրցույթ, ինչի առիթով ժամանակին քրեական գործ է հարուցվել:**

Խմբագրությանը հայտնի է դարձել նաեւ, որ պետֆոնդի հողերի 2017թ. «մրցույթը» մարզպետի սրտով կազմակերպելուց անմիջապես հետո կարճվել է Մուրադ Սիմոնյանի աճուրդային (մրցութային) խաղերի հետ կապված քրեական գործի նախաքննությունը:

Հիմա պարզագույն մի հարց է հետաքրքրում մարդկանց՝ հայտնի քրեական գործի կարճումը որքանո՞վ է առնչվում Մուրադ Սիմոնյանի կողմից 2017թ. մրցույթի արդյունքներն աղավաղելու հետ: Չէ՞ որ մարզպետն է տեղի-անտեղի հայտարարում, թե ինքն է Սյունիքում քրեական գործեր հարուցում, քրեական գործեր կարճում, նախաքննության ժամկետներ երկարաձգում…»:

Նախորդ հրապարակմանը մարզի դատախազը չի արձագանքել մեզ համար անհասկանալի պատճառներով, իսկ հիմա... Խնդրո առարկայի վերաբերյալ Վազգեն Հարությունյանի պարզաբանումն ավելի քան պահանջված է այսօր, ինչին սպասում են ոչ միայն Տաթեւ համայնքի բնակիչները:

«Սյունյաց երկիր»

Կորել է

Գարիկ Համլետի Աթայանի դիպլոմը՝ AD N057537, տրված 13.07.2007թվ. ՀՀ ԿԳՆ Գորիսի պետական համալսարանի կողմից:

Համարել անվավեր:

Քարահունջցիները հրավիրում են Գորիսի համայնքապետի ուշադրությունը

Վերջին օրերին կտրուկ ավելացել են «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն այցելողները, խմբագրության աջակցությունը կամ միջամտությունը հայցողները:

Նրանք նաեւ հիմնավորում են մարզային լրատվամիջոցին դիմելու դրդապատճառները. մարզպետարանը վաղուց կազմալուծված եւ մահացած մարմին է, համայնքների ղեկավարներն էլ օտարական մարզպետի քմահաճույքների կառքին են լծվել եւ ինքնուրույն որեւէ քայլ չեն կարող անել…

Ապրիլի 28-ին խմբագրություն էին այցելել Քարահունջ գյուղի մի խումբ բնակիչներ:

Այդ գյուղը դարեր ի վեր հռչակված է եղել իր բացառիկ թթաստաններով: Ասում են՝ այգիների մեկ տարվա եկամուտը հերիք է եղել, որպեսզի յոթ տարի բավարարված լինեն գյուղի բնակչության կարիքները:

Վերջին տարիներին, սակայն, Քարահունջի առասպելական թթաստանները եւ թթից գոյացող մյուս բարիքները (թթի օղի, դոշաբ եւ այլն) վերացվելու վտանգի առաջ են հայտնվել:

Մի քանի համագյուղացիներ իրենց անասուններն արոտավայրերում արածեցնելու փոխարեն անարգել բաց են թողնում այգիների մեջ, ինչի արդյունքում ոչնչանում են մատղաշ ծառերը, տնկիները, վնասվում են ծառերի ճյուղերը եւ ի վերջո չորանում: Անհնար է դարձել այգիների տարածքում խոտ հնձելը, այնտեղ բանջարաբոստանային մշակաբույսեր աճեցնելը:

Մյուս կողմից՝ Վարարակն գետի վրա հիմնված փոքր հէկերի համար կառուցված խողովակաշարերի, ճանապարհների հետեւանքով փչացել է այգիների առուների մեծ մասը, որը չի վերականգնվում հէկերի սեփականատերերի կողմից (Սասուն Խաչատրյան, Վարդանյաններ եւ մյուսներ):

Ստեղծված իրավիճակում մարդիկ կանգնել են երկմտանքի առաջ՝ այսուհետ զբաղվե՞լ այգեգործությամբ, թե՞ ոչ: Ի դեպ, մի շարք քարահունջցիներ արդեն իսկ հրաժարվել են այգիները մշակելուց, թեեւ այդ թթաստաններն են գյուղի բնակիչների գոյապահպանման հիմնական աղբյուրը:

Խնդրո առարկա հարցով քարահունջցիները դիմել են ոստիկանության Գորիսի բաժնի պետ, գնդապետ Կարեն Թադեւոսյանին (փետրվար, 2018թ.), բայց նա ինչ-որ անիմաստ, ոչինչ չասող մի պատասխան է տվել գյուղացիներին՝ պատասխանատվությունը բարդելով համայնքապետի վրա:

Ս.թ. փետրվարի 2-ին գյուղացիները դիմել են Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին: Նա էլ, պարզվում է, հույսը դրել է նախեւառաջ գյուղի վարչական ներկայացուցիչ Լուսինեի վրա, ով էլ հազիվ, ըստ այգետերերի, զբաղված է բացառապես սեփական խանութի գործերը տեսախցիկներով վերահսկելու հույժ պետական աշխատանքով:

Քարահունջցիների մտահոգություններին ադրադարձել է նաեւ «Զանգեզուր» թերթը՝ «Ինչո՞ւ եւ ինչի՞ց են դժգոհ քարահունջցիները» վերտառությամբ հոդվածում (18 ապրիլի 2018թ.):

Ու այդ ամենից հետո անասնատերերը շարունակում են արածա-

վեր անել այգիները…

Գյուղացիներից մեկը զայրացած պատմում է, որ անասնատերերը յուրօրինակ պայքար են սկսել այն այգետերերի դեմ, ովքեր համարձակվել են մախաթը պարկից հանել եւ խնդրի մասին բարձրաձայնել գյուղի սահմաններից դուրս: Եղել են դեպքեր, երբ ծառի փչակներում դյուրավառ ռեզին են տեղադրել՝ փորձելով հրդեհել ծառերը: Իսկ ոստիկանապետն ասում է՝ դա մեր գործը չէ…

Այգետերերից յուրաքանչյուրի կրած տարեկան վնասի չափը պատկերացնելու համար հիշեցնենք գյուղացիներից մեկի վկայությունը, թե ինչ էր ստանում ինքը այգուց՝ մեկ տարվա ընթացքում. 70 խուրձ խոտ, մոտ 600 կգ կարտոֆիլ, մոտ 90 կիլոգրամ չոր լոբի, մոտ մեկ տոննա թթի բարձորակ օղի…

Գյուղացիները պնդում են, որ այգիների տարածքը ցանկապատել հնարավոր չէ, ինչն առաջարկում են տեղական իշխանավորներն ու անասնատերերը, թեկուզ եւ այն պատճառով, որ դրա համար մեծ ու հավելյալ ծախսեր են պահանջվում:

Ելքը, ըստ գյուղացիների, մեկն է՝ քմահաճ գյուղացիներին կարգի հրավիրել, ինչը չի կարող գլուխ բերել Քարահունջի վարչական ներկայացուցիչ Լուսինեն: Վերջինս, նույնիսկ, իր հետ անկեղծացող եւ խնդիրը քննարկող գյուղացիների անունը ժամ առաջ հայտնում է անասնատերերին՝ կոնֆլիկտի վրա յուղ լցնելով:

Քարահունջցիները դիմում են համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին՝ Դուք ի վիճակի՞ եք կարգավորել ծագած խնդիրը, թե՞ պիտի նորից հանձնարարեք Լուսինեին, Մենուային, ովքեր, պարզվում է, ընդունակ չեն որեւէ հարց կարգավորել:

Ինչեւէ, գյուղացիները սպասում են համայնքի ղեկավարի կոնկրետ քայլերին, այլապես տեղական մասշտաբի այդ հակամարտությունը կարող է եւ անցանկալի հետեւանքներ ունենալ, որի պատասխանատուները, անշուշտ, լինելու են Առուշ Առուշանյանը եւ ոստիկանապետ Կարեն Թադեւոսյանը:

-Ինչ է, սպասում են, որ այգիներում ցաքատով մի օր մարդիկ իրար խփե՞ն, - ասաց զրուցակիցներից մեկը:

Առուշ Առուշանյանը, կարծում ենք, հրապարակային խոսքի պիտի ասի գյուղացիներին եւ կոնկրետ միջոցներ ձեռնարկի:

Համայնքապետը հավանաբար տեղյակ է, որ գարնանային աշխատանքների բուռն օրեր են հիմա եւ մեկ օրն անգամ գյուղացու համար վճռորոշ նշանակություն ունի:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

28.04.2018թ.

Մարզպետի բեռնատարների ոդիսականը

Ապրիլի 27-ին «Սյունյաց երկրի» խմբագրություն են այցելել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության բեռնատարների վարորդները:

Եկել էին հրապարակավ զգուշացնելու Վահե Հակոբյանին եւ Միեր Պոլոսկովին:

Բանն ի՞նչ է:

Մինչեւ Վահեի եւ Միերի գալը տեղացի վարորդներն աշխատում էին նորմալ պայմաններում եւ համարյա թե խնդիրներ չունեին:

Գաղութարարների գալուց հետո իրավիճակը կտրուկ փոխվել է:

Բեռնափոխադրումների մեծ մասը տրվել է Վահե Հակոբյանի ընտանիքին պատկանող մեքենաներին. Վահեն անձամբ ունի 36 բեռնատար, որոնք ընդգրկված են Քաջարանի կոմբինատի աշխատանքներում:

Պարզվում է՝ ավտոմայրուղում երեւացող «ՍԿԱՆԻԱ» մակնիշի եւ «ԱՎ» տառերով համարանիշի 30 տոննանոց բեռնատարները հենց Վահե Հակոբյանինն են, նրանք էլ կատարում են բեռնափոխադրումների առյուծի բաժինը:

Վահե Հակոբյանի սեփական բեռնատարներից յուրաքանչյուրն ամսական կատարում է 13-14 ուղերթ:

Իսկ տեղացի վարորդնե՞րը…

Տեղացի մոտ 70 վարորդից յուրաքանչյուրին ամսական 4-5 ուղերթի հնարավորություն է տրվում, ինչը չի բավականացնում ո՛չ մեքենաների, ո՛չ էլ տան նվազագույն ծախսերը հոգալուն:

Մի ուրիշ հանգամանք էլ. Վահեի 30 տոննա տարողությամբ բեռնատարներին բարձում են 30 տոննա խտանյութ, իսկ տեղացի վարորդների մեքենաներին՝ 28 տոննա:

Ապրիլի 27-ին, օրինակ Քաջարանի կոմբինատում բարձել են 42 մեքենա խտանյութ, որից 35-ը Վահեի մեքենաներն են:

Քաջարանցի վարորդներին մտահոգում է նաեւ Վահե Հակոբյանի ու Միեր Պոլոսկովի տիեզերական ատելությունը տեղաբնակների եւ հատկապես կապանցիների հանդեպ: Եթե, օրինակ, լրացուցիչ բեռնատար մեքենայի կարիք է առաջանում, նրանք գերադասում են այդ մեքենան բերել հանրապետության այլ շրջաններից, բայց ոչ Կապանից:

Ըստ վարորդների՝ դա արվում է նաեւ բեռնատար մեքենաների մի մասը (հատկապես դրսեկ մեքենաների) ոչ հարկային դաշտում (ստվերում) պահելու նպատակով:

Ի՞նչ են ուզում Քաջարանի կոմբինատի

բեռնատարի վարորդները:

Միեր Պոլոսկովն ու Վահե Հակոբյանը մեկ շաբաթվա ընթացքում պետք է կարգավորեն խնդիրը՝ տեղացի վարորդներին ամսական գոնե 7-8 ուղերթ հատկացնելով:

Պահանջում են նաեւ՝ Վահե Հակոբյանի սեփական 36 մեքենաները պետք է լքեն Սյունիքի սահմանները՝ իրենց տեղը զիջելով տեղացի վարորդներին, ովքեր գործազուրկ վիճակում են:

***

Կապանցի ցուցարարները փակել էին Վահե մարզպետի սեփական բեռնատարների ճանապարհը, որոնք Քաջարանից խտանյութ էին տեղափոխում

Ապրիլի 29-ին Կապանի ցուցարարները փակել էին Մեղրի-Երեւան միջպետական ավտոմայրուղին՝ նախ՝ կայարանի թաղամասին հարակից տարածքում, ապա՝ օդակայանի մերձակայքում:

Օդակայանի հատվածում՝ մոտ մեկ կիլոմետր երկարությամբ, շարվել էին մի քանի տասնյակ մեքենաներ:

Դա ժամը 13-ից 16-ի սահմաններում էր:

Ակցիայի նպատակի մասին իր ֆեյսբուքյան էջում այսպիսի գրառում է կատարել ցուցարարների առաջնորդներից մեկը՝ Տիրայր Ղահրամանյանը. **«Չենք թողնում Հայաստանին պատկանող հարստությունը Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի գլխավորությամբ գողանան: Հայաստանի ցանկացած կետում կանգնեցրեք այդ մեքենաները եւ մի թողեք, որ գողանան մեր երկրի հարստությունը»:**

Ցույցի կազմակերպիչներին այդ ընթացքում մոտեցել են Քաջարանի կոմբինատի մյուս բեռնատարների (Վահե Հակոբյանին չպատկանող) վարորդները եւ խնդրել աջակցություն՝ մարզպետի սեփական բեռնատարները Սյունիքից հեռացնելու խնդրում:

***

Մայիսի 3-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ըստ մարզպետարանից ստացվող տեղեկությունների, մարզպետարան է հրավիրել Քաջարանի կոմբինատում աշխատող տեղացի վարորդներին ու փորձել նրանց հետ լեզու գտնել:

Վարորդները շարունակել են պնդել, որ մարզպետի սեփական բեռնատարները պետք է հեռանան Սյունիքից՝ ասպարեզը զիջելով տեղացի վարորդների մեքենաներին:

Հանդիպումից հետո մարզպետարանից մեզ խիստ տարօրինակ տեղեկատվություն են փոխանցել՝ թե իբր Վահե Հակոբյանը վարորդների ցասումը մեղմելու համար հայտարարել է, թե միայն իր մեքենաները չէ, որ Քաջարանից խտանյութ են փոխադրում, այլ…

Ելնելով Արցախի հանրապետության շահերից, առայժմ չենք հրապարակում բարձրաստիճան պաշտոնյայի անունը, ում բեռնատարները եւս (ըստ Վահե Հակոբյանի) Քաջարանից բեռնափոխադրումներ են կատարում՝ ոտնահարելով կապանցի ու քաջարանցի վարորդների շահերը:

«Սյունյաց երկիր»
03 մայիսի 2018թ.

Ի՞նչ կապ կա Քաջարանի սալյարկա գողացողների եւ Օմսկ քաղաքի հանցավոր խմբերից մեկի միջեւ

Քաջարանի մեր աղբյուրները հաղորդում են, որ տեղի սալյարկա գողացողների շայկան ինչ-ինչ հարցերով կապված է Ռուսաստանի Դաշնության Օմսկ քաղաքի հանցավոր խմբերից մեկի հետ:

Վերջին մի քանի տարում մեծ թվով քաջարանցիներ ձեռք են բերել Օմսկ քաղաքի բուհերից մեկի դիպլոմներ՝ մեկ օր անգամ չլինելով այդ քաղաքում, ռուսերեն մեկ բառ անգամ չիմանալով:

Դիպլոմները քաջարանցիներին է վաճառվել օմսկյան այդ խմբավորման ու սալյարկա գողացողների համագործակցության շրջանակում:

Ուշագրավ է փաստը, որ Օմսկից ստացած կեղծ դիպլոմների տերերից շատերը պատասխանատու պաշտոններ են ստացել ե՛ւ համայնքում, ե՛ւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում:

Իհարկե, առանց որեւէ դժվարության կարելի է պարզել, թե քաջարանցիներից ով եւ երբ է սովորել ՌԴ Օմսկ քաղաքում եւ արդյո՞ք սովորել է:

Բայց ստացված տեղեկատվությունն առավել հետաքրքիր է մեկ այլ առումով:

Արդյո՞ք Քաջարանի սալյարկա գողացողների եւ Օմսկի ինչ-որ հանցավոր խմբի միջեւ համագործակցությունը սահմանափակվել է միայն դիպլոմների առուտուրով, թե՞ ուրիշ հարցերում էլ են համագործակցել:

Բանն այն է, որ նույն աղբյուրի վկայությամբ այդ խմբերին երբեմն-երբեմն ինչ-ինչ պատվերներ է տալիս նաեւ Վահե Հակոբյան մարզպետը…

«Սյունյաց երկիր»

Երջանկահիշատակ Ռոբերտ էջանանցին Նիկոլ Փաշինյանի մասին



Լեռնաձորցի Բորիկն ուշագրավ մի զրույց է փոխանցել «Սյունյաց երկիր» թերթին:

…Տարիներ առաջ Կապանի տարածաշրջանի Լեռնաձորի միջնակարգ դպրոց է այցելել լրագրող, թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը:

Դպրոցի տնօրեն Ռոբերտ էջանանցի-Գրիգորյանը նրան ընդունել է իրեն յուրահատուկ անկեղծությամբ, ջերմությամբ, հյուրասիրությամբ՝ մածուն, շոր, տաք-տաք լավաշ, լեռնաշխարհի համեմունքներով թեյ…

Երկար զրուցել են, կարծիքներ փոխանակել ոչ միայն հանրակրթության, այլեւ երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրների շուրջ, որից հետո հյուրը շարունակել է ճանապարհը:

Դպրոցի բակից Նիկոլ Փաշինյանին ճանապարհելուց եւ ողջերթի խոսք ասելուց հետո էջանանցին շրջվել է դեպի այնտեղ կանգնած ուսուցիչները եւ հիացական տպավորություն հայտնել. **«Էդ խոխան մեր կըլոխը օյին ա պիրիլու…»:**

Զրույցը գրառեց
Սամվել Ալեքսանյանը

Առայժմ՝ երրորդ հորիզոնականում

Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում հանդես եկող «Գանձասար-Կապանի» համար վերջին երեք հադիպումներն աչքի ընկան գոլերի առատությամբ, ընդ որում՝ գնդակները սլացան ե՛ւ հակառակորդի դարպասը, ե՛ւ իր: Նախ շարունակում են տնային հանդիպումները թիմի համար խնդիր մնալ. առաջնության վեց թիմից միակն է, որի խաղերն անցնում են առանց սեփական երկրպագուների աջակցության, եւ 25-րդ տուրի Երեւանի «Ալաշկերտի» հետ խաղը հակառակորդին հյուրընկալել էր նրա հարկի տակ: Գրանցվեց խոշոր հաշվով հաղթանակ՝ 4:0՝ հօգուտ «Ալաշկերտի»: Թվում էր, թե նման պարտությունից հետո դժվար կլիներ ուշքի գալ, բայց հաջորդ հանդիպումով կապանյան թիմը պարզապես զարմացրեց իր երկրպագուներին՝ 6:1 հաշվով հաղթելով Երեւանի «Արարատին», ընդ որում՝ թիմի հարձակվող Գեղամ Հարությունյանը դարձավ պոկերի՝ չորս գոլի հեղինակ, ռմբարկուների մրցապայքարում բարձրանալով երկրորդ հորիզոնական՝ խփած 11 գնդակի շնորհիվ: Ընդ որում՝ Գեղամը 34-րդ գոլը խփեց «Գանձասարի» կազմում եւ այդ ցուցանիշով հավասարվեց կապանյան թիմի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկու Արթուր Քոչարյանին:

Առաջնության 27-րդ տուրում «Գանձասար-Կապանը» հանդիպեց Երեւանի «Փյունիկի» հետ եւ հաղթեց

4:3 հաշվով: Գոլերից մեկը հեղինակել է Գեղամ Հարությունյանը, խփած գնդակների քանակով հավասարվելով առաջնության լավագույն ռմբարկու Արտակ Եդիգարյանին («Ալաշկերտ»): Երկուսն էլ իրենց հաշվին ունեն մրցակիցների դարպասն անցկացրած 12 գնդակ: Հաղթանակը հնարավորություն տվեց թիմին գրավել 3-րդ հորիզոնականը: Հաջորդ խաղը թիմն անցկացրեց մայիսի 9-ին՝ մրցակցի հարկի տակ, Գյումրու «Շիրակի» հետ: Հանդիպումն ավարտվեց գոլազուրկ՝ ոչ-ոքիով, ինչից հետո էլ «Գանձասար-Կապանը» շարունակում է պահպանել իր տեղը՝ երրորդ հորիզոնականում: Առաջնության ավարտին մնացել է երկու տուր: Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության նախավերջին տուրում «Գանձասար-Կապանը» հանդիպել է Երեւանի «Բանանցի» հետ եւ պարտությունից խուսափել ավելացված ժամանակում խփած գոլի շնորհիվ: Գրանցվել է ոչ ոքի 1:1: Թիմը մնացել է երրորդ հորիզոնականում եւ ձեռք բերել Եվրոպայի լիգայի գավաթի խաղարկության որակավորման փուլի ուղեգիր: «Գանձասար-Կապանին»:

Վահրամ Օրբելյան

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայտարարվում է 2017/2018 ուսպարվա առկա ուսուցման ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտություններ	Ընդունելության քննությունները				Ընդունելության տեղ/այդ թվում		Ուս. վարձը (հազ. դրամ)
	Մրցութային			Ոչ մրցութային	ան վճար 18տեղ	ճարովի ԱՏ 210տեղ	
Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	2	15	220
Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	տլ(գ)**		-	25	420
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	2	15	220
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)կամ ԸՊ(գ)		Հլգ(գ)*	2	20	300
Հայոց լեզու և գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)			2	20	260
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**			2	30	270
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)		Հլգ (գ)*	2	20	340
Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ (գ)*	2	20	270
Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		2	25	350
Էլեկտրոնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	2	20	220

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչև ս/թ հունիսի 1-ը, ժամը 18:00-ն:

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

ա) Լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),

բ) 6 լուսանկար (3x4 սմ չափսի),

գ) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին,

դ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),

ե) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու, ծառայության վայրի և ծառայողական բնութագրի մասին,

զ) արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (զինծառայող ծնողի զոհվելու, 1-ին կամ 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),

է) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ) դիպլոմներ,

ը) փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 096156484

Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 2
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Փոքր Դրամաշնորհային Ծրագրերի Ներկայացման Հրավեր

ՀՀ Սյունիքի մարզում գրանցված հասարակական կազմակերպությունների համար

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագրի իրականացման գրասենյակը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության անունից հրավիրում է Սյունիքի մարզում գրանցված բոլոր Հասարակական Կազմակերպություններին՝ մասնակցելու փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթին:

Ծրագիր՝ **«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստանե (ՊՏԱԾ-Հ)**
Հղում No՝ **BMZ-N 2009.6657.2**
Ֆինանսավորում՝ **KfW Զարգացման բանկ (KfW), Գերմանիա**
Դրամաշնորհի տրամադրող՝ **ՀՀ բնապահպանության նախարարությունը (Ծրագրի իրականացնող մարմին) և ՊՏԱԾ-Հ ԾԻԳ-ը**
Պայմանագիր՝ **Դրամաշնորհի/Նվիրաբերության տրամադրման**
Հայտարարության սկիզբ **Մայիսի 15, 2018**
Փաթեթների ներկայացնելու վերջնաժամկետ **Հունիսի 15, 2018, 18:00**
Փաթեթների ներկայացման ձևը **Փաթեթները պետք է ուղարկվեն էլեկտրոնային, ինչպես նաև թղթային տարբերակներով.**
Փաթեթների թղթային տարբերակների ներկայացնման հասցեներ **ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, 6/1 Մ. Ստեփանյան, Հասմիկ Խաչոյանին կամ ՀՀ Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, սենյակ N 544, Մարտիրոս Նալբանդյանին**
Փաթեթների էլեկտրոնային տարբերակների ներկայացնման հասցեներ **h.khachoyan@consecoard.am; m.nalbandyan@consecoard.am**
Փաթեթի լեզու **Հայերեն**

Մրցույթին մասնակցության համար ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Ծրագրային հայտադիմում
2. Գործողությունների պլան
3. Ֆինանսական Պլան/Բյուջե
4. Հասարակական Կազմակերպության գրանցման վկայականի պատճեն
5. Հասարակական Կազմակերպության կանոնադրության պատճեն
6. Այլ դոնորներից համաֆինասավորում ունեցող ծրագրերի դեպքում՝ երաշխավորության նամակ տվյալ դոնորից:

Ձևաթղթերի կամ լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերման համար գրել ՊՏԱԾ-Հ ծրագրի սոցիալ-տնտեսական հարցերով մասնագետ Հասմիկ Խաչոյանին՝ հետևյալ էլ-փոստի հասցեով. h.khachoyan@consecoard.am կամ զանգահարել +374 (0) 93 549955 հեռախոսահամարով:

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագիրը մաս է կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական Համագործակցության և Զարգացման Նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկած Կովկասյան նախաձեռնության:

Սույն ծրագիրը իրականացվում է համաձայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված միջկառավարական համաձայնագրի, ինչպես նաև KFW բանկի և ՀՀ Բնապահպանության Նախարարության միջև 28.05.2013թ-ին ստորագրված Հատուկ Համաձայնագրի միջոցով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 18.05.2018թ.: